ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-97-9.04.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 540 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳ
ՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-97-9.04.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐ-ՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ պարբերության «բ» կետը թողնել անփոփոխ, փոխարենը՝ նույն օրենքի 21-րդ (Ընկերության անդամներից գանձվող վճարների տեսակները) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Մատակարարված ոռոգման ջրի վճարի վճարման կարգը սահմանում է ջրային համակարգերի կառավարման ոլորտում պետական քաղաքականություն մշակող մարմինը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2019 թվականի N 540 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Վարդան Մելքոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-97-9.04.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-097-09.04.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱ
ՕՐԵՆՔԸ

«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ««Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ 2002 թվականի հունիսի 4-ի ՀՕ-374-Ն օրենքի 5.1 հոդվածի 2-րդ պարբերության բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

բ) յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել անկանխիկ ձևով մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

- **Ներկա իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Չնայած այն հանգամանքին, որ տարիներ շարունակ խոսվում է ոռոգման ջրի համար վճարումները բացառապես բանկային համակարգով իրականացվելու անհրաժեշտության մասին, մինչ օրս մատակարարված ոռոգման ջրի դիմաց գումարը հավաքագրում են ջրբաշխները:

Սա հանգեցնում է լուրջ խնդիրների և դժվարությունների այն պատճառով, որ կանխիկ վճարումների դեպքում քաղաքացիների և ջրբաշխների միջև հաճախ առաջանում են անճշտություններ՝ կապված վճարման փաստի հետ: Բացի այդ, նման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը գրեթե անհնար է: Ուստի անհրաժեշտ է օրենքով նախատեսել մատակարարված ոռոգման ջրի դիմաց առձեռն որևէ վճարում կատարելու, գումարը փոխանցելու արգելք:

- **Առաջարկվող կարգավորումը**

Օրենքի նախագծով առաջարկվում է «Ջրօգտագործողների ընկերությունների եվ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում ամրագրել մատակարարված ոռոգման ջրի դիմաց բացառապես անկանխիկ ձևով վճարում կատարելու ջրօգտագործողի պարտականությունը:

- **Ակնկալվող արդյունքը**

Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունը թույլ կտա խուսափել հնարավոր անճշտություններից, ինչպես նաև հաշվի առնելով, այն հանգամանքը, որ անկանխիկ գործառնությունները ենթակա են առավել հեշտ կարգով վերահսկման, կապահովվի ՋՕԸ-երի գործունեության թափանցիկությունը՝ նվազագույնի հասցնելով կոռուպցիոն ռիսկերը: